ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-11-3-Ա

ք. Երևան 14.11.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի նոյեմբերի 14-ի նիստում քննարկեց 2019 թվականի հոկտեմբերի 24-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ BURGER KING CORPORATION (5505 BLUE LAGOON DRIVE 8TH FLOOR, LEGAL DEPARTMENT MIAMI, FL 33126, US) բողոքը (IR1395851) «BURGER KING» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «BURGER KING» («Վալլետտա» ՍՊԸ Կապան, Բաղաբերդ թաղ., 2ա շենք, բն. 2 AM N 7532, 30.09.2003, N 10531, 31.05.2006) բառային ապրանքային նշանի առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում «BURGER KING» գրառումը:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «BURGER KING» («Վալլետտա» ՍՊԸ Կապան, Բաղաբերդ թաղ., 2ա շենք, բն. 2 AM N 7532, 30.09.2003, N 10531, 31.05.2006) բառային ապրանքային նշանին:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր բողոքում նշված իր հիմնավորումները:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «BURGER KING» (IR1395851) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ